ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

«ՇՄՆ-ԷԱՃ-ԱՊՁԲ-24/13» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի նիստի

ք.Երևան **« 21 » « մարտի » 2024թ.**

ժամը 15:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Լ.Սինանյան

Հանձնաժողովի անդամներ՝

Ա.Կարապետյան

Է.Ամիրխանյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Լ.Զոհրաբյան

1. «ՇՄՆ-ԷԱՃ-ԱՊՁԲ-24/13» ծածկագրով մրցույթի մասնակցի կողմից ներկայացրած հայտում առկա անհամապատասխանությունը շտկելու վերաբերյալ տեղեկություններ

1.1. «Արգավանդ Կահույք» ՍՊԸ-ի, «Ի Ջի Էլեկտրոնիքս» ՍՊԸ-ի, «Ալֆա-Էտալոն» ՍՊԸ, «Սեգ» ՍՊԸ-ի, «Գռոսս Գրուպ» ՍՊԸ-ի, «Այթի Էլեկտրոսոֆթ» ՍՊԸ-ի, «Լեվան» ՍՊԸ-ի և Ա/Ձ «Արման Առաքելյան»-ի սահմանված ժամկետում շտկել են անհամապատասխանությունը՝ ներկայացրել հրավերի պահանջներին համապատասխան՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրերը շտկված:

1.2. «Լա Իմպորտ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում չի շտկել անհամապատասխանությունը և համակարգի միջոցով, մինչև կասեցման ժամկետի ավարտը չի ներկայացրել պահանջվող փաստաթղթերը:

2. Հանձնաժողովը որոշեց՝

(Լ.Սինանյան)

2.1. Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի 526-Ն որոշման հավելված 1-ով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 42-րդ կետը և Հրավերի 1-ին մասի 8.11 կետը, ինչպես նաև գնահատող հանձնաժողովի գնահատման արդյունքները՝ «Լա Իմպորտ» ՍՊԸ-ի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

2.2. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն չափաբաժին 3-ով գնման ընթացակարգը հայտարարել չկայացած:

2.3. Հիմք ընդունելով գնահատող հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ «ՇՄՆ-ԷԱՃ-ԱՊՁԲ-24/13» ծածկագրով մրցույթի չափաբաժին 1-ով հաղթող ճանաչել «Տեխնոֆորում» ՍՊԸ-ին, չափաբաժիններ 2, 5, 17-ով «Ի Ջի Էլեկտրոնիքս» ՍՊԸ-ին, չափաբաժին 8, 9, 13-ով «Արգավանդ Կահույք» ՍՊԸ-ին, չափաբաժիններ 14, 15, 16-ով «Այթի Էլեկտրոսոֆթ» ՍՊԸ-ին, չափաբաժին 4-ով «Ալֆա-Էտալոն» ՍՊԸ-ին, չափաբաժին 6-ով «Սեգ» ՍՊԸ-ին, չափաբաժին 7-ով «Լեվան» ՍՊԸ-ին, չափաբաժիններ 10, 12-ով «ԳՌՈՍՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին, չափաբաժին 11-ով Ա/Ձ «Արման Առաքելյան»-ին:

2.4. Պայմանագրի կնքման նպատակով «ՇՄՆ-ԷԱՃ-ԱՊՁԲ-24/13» ծածկագրով մրցույթի հաղթող ճանաչված մասնակիցներին անգործության ժամկետի ավարտից հետո ծանուցել, օրենքով և հրավերով սահմանված ժամկետում ներկայացնել՝

ա) պայմանագրի կատարման ապահովում տուժանքի ձևով՝ միակողմանի հաստատված հայտարարություն և վճարման պահանջագիր՝ գնման գնի 10 տոկոսի չափով և

բ) որակավորման
ապահովման տուժանքի ձևով՝ միակողմանի հաստատված հայտարարություն և վճարման պահանջագիր՝ գնման գնի 15 տոկոսի չափով:

2.5. Հաստատել պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության տեքստը:

2.6. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ չափաբաժին 7-ով անգործության ժամկետ չի սահմանվում:

2.7. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն սահմանել անգործության ժամկետ՝ պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարություն հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

3. Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները և ազգանունները:

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Լ.Սինանյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Ա.Կարապետյան

_____ Է.Ամիրխանյան

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Լ.Զոհրաբյան